“ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ” ՈՒՎԿ ԱԿ		**ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հավելված 1
Հաստատված է «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ
Դիտորդ խորհրդի 2026թ. հունվարի 30-ի N 01 որոշմամբ
Խմբագրության հերթական համարը՝ 01

Ուժի մեջ է՝ 09.02.2026թ.

1. ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1.1. Շահութաբաժնային քաղաքականությունն իրենից ներկայացնում է <<Ֆարմ Կրեդիտ Արմենիա>> ՈՒՎԿ ԱԿ (այսուհետ՝ ՎԿ) շահույթի կառավարման ընդհանուր քաղաքականության մի մասը:

1.2. ՎԿ շահութաբաժնային քաղաքականությունը հիմնվում է ՎԿ-ի ֆինանսական կայունության, կապիտալացման և իրացվելիության բարձրացման, ՎԿ-ի և նրա փայատերերի շահերի հավասարակշռվածության, ներդրված կապիտալի շահութաբերության ապահովման, փայատերերի իրավունքների պաշտպանության և նրանց բարեկեցության բարձրացման վրա:

1.3. ՎԿ-ն պետք է պահպանի կապիտալի համարժեքության բավարար մակարդակ՝ ՎԿ-ի ռազմավարական ծրագրով նախատեսված զարգացումն ապահովելու համար,

1.4. ՎԿ-ն պետք է պահպանի օրենսդրությամբ, ՎԿ ներքին իրավական ակտերով, ինչպես նաև ներդրողների և ֆինանսական միջոցների ներգավման պայմանագրերով սահմանված պահանջները:

2. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. ՎԿ փայատերերին շահութաբաժինները վճարվում են օրենսդրության և հաշվապահական հաշվառման կանոններին համապատասխան հաշվարկված չբաշխված շահույթից:

2.2. Տարեկան շահութաբաժինների վճարման չափը չի կարող գերազանցել ՎԿ չբաշխված շահույթի գումարը:

2.3. Շահութաբաժիններն արտահայտվում են ընդհանուր գումարով և/կամ ՎԿ հաշվետու տարվա զուտ շահույթի տոկոսային մասով և/կամ մեկ փային բաժին ընկնող գումարով:

2.4. Շահութաբաժինները վճարվում են ՀՀ դրամով:

2.5. Շահութաբաժինների վճարման նախապայմաններն են՝

- ՎԿ-ում չբաշխված շահույթի դրական մնացորդի առկայությունը,
- շահութաբաժինների վճարման՝ սույն քաղաքականության 3-րդ գլխով նախատեսված սահմանափակումների բացակայությունը,
- Ֆինանսական ժամանակաշրջանի արդյունքներով առաջացած շահութաբաժինների վճարման (հայտարարման) մասին Ընդհանուր ժողովի որոշման առկայությունը:

3. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

3.1. ՎԿ-ն համաձայն իր կանոնադրության մինչև 2035թ.-ի հունվարի 1-ը իր շահույթը ՎԿ-ի զարգացման նպատակով ուղղելու է ՎԿ-ի կապիտալի համալրմանը:

3.2. ՎԿ-ն մինչև 2035թ.-ի հունվարի 1-ը կարող է շահաբաժիններ վճարել բացառապես ՎԿ-ի կանոնադրական կապիտալում վերաներդնելու պայմանով կամ համաձայն բաժնետիրության պայմանագրի (shareholding agreement):

3.3. Շահութաբաժիններ վճարելը (հայտարարելը) արգելվում է, եթե այդ պահին ՎԿ կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են ՎԿ-ում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

3.4. ՎԿ-ն չի կարող կայացնել շահութաբաժիններ վճարելու մասին որոշում, եթե

- ՎԿ Ընդհանուր ժողովի որոշման ընդունման պահին առկա է կամ այդ որոշման կատարման արդյունքում կարող է առաջանալ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները կամ ՎԿ և ՎԿ ներքին իրավական ակտերով սահմանված ցուցանիշները խախտելու հավանականություն,
- շահութաբաժինների բաշխումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել ՎԿ ֆինանսական վիճակի վատթարացման,
- շահութաբաժինների բաշխումը հակասում է ՀՀ գործող օրենսդրությանը:

4. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4.1. Շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է ՎԿ Ընդհանուր ժողովը՝ ՎԿ Դիտորդ Խորհրդի առաջարկությամբ:

4.2. Ընդհանուր ժողովն իրավունք ունի ընդունել որոշում շահութաբաժիններ չվճարելու մասին:

4.3. Համաձայն ՎԿ կանոնադրության ՎԿ-ն իրավունք ունի վճարել շահութաբաժիններ բացառապես տարեկան արդյունքներով:

4.4. ԳԳՏ-ն ներկայացնում է Խորհրդին հիմնավորումներ, հաշվարկներ և առաջարկություններ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:
4.5. Շահութաբաժինների վճարումը պետք է կատարվի ոչ ուշ, քան շահութաբաժիններ վճարելու մասին Ընդհանուր ժողովի որոշման կայացումից 3 ամիս հետո:
4.6. Տարեկան շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող ՎԿ բաժնետերերի ցուցակը կազմում է Խորհուրդը: